ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԾՁԲ-15/11-16/7-90

Ք. Երևան «17» «08» 2016թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լենտեքս» ՍՊԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Կ. Գոմցյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մասնագիտական ուսուցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 2 հավելվածով՝ Գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **11000000 (տասնմեկ միլիոն)** ՀՀ դրամ, եթե Կատարողը ԱԱՀ վճարող է՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից, գործում է մինչև 2016թ. դեկտեմբերի 30-ը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 և N4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Լենտեքս» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական շենք N 3	ք. Գյումրի, Շտապ օգնության տարածք 240/020
(հասցեն)	*(հասցեն)*
Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկի անվանումը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրիի մասն.
h/h 900011102077, հվhh 01506515	h/h 2050122004451001 հվhh 05524005
(բանկային վավերապայմանները)	*(բանկային վավերապայմանները)*
Աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյան	Գործադիր տնօրեն Կ. Գոմցյան

Հավելված N 1
«17» «08» 2016թ. կնքված
N ՇՀԵՁԲ-15/11-16/7-90 գնման պայմանագրի

26. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում ՀՀ պետական բյուջեի միջոցների սահմաններում իրականացվող
Փաթեթավորող /ձեռքով/ մասնագիտությամբ ուսուցման ծառայության
Պատվիրատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ

1. Գնման առարկան է՝ 100 գործազուրկի (որից 10-ը հաշմանդամ) մասնագիտական ուսուցման իրականացում Փաթեթավորող /ձեռքով/ մասնագիտությամբ:

2. Մասնագիտական ուսուցման տևողությունը 2 ամիս է:

3.Մասնագիտական ուսուցումն իրականացվում է կատարողի կողմից ներկայացված և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության (այսուհետև՝ գործակալություն) հավանությանն արժանացած ուսումնական պլանով և ուսումնական ծրագրերով (մասնագիտական ուսուցման ծրագրի ընդհանուր տևողությունը պետք է կազմի առնվազն 250 ժամ):

4. Մասնագիտական ուսուցումն իրականացվում է խմբային ուսուցման ձևով, խումբը պետք է բաղկացած լինի առավելագույնը 15 անձից, (հնարավոր է հերթափոխով), ժամը 9:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում:

5. Մասնագիտական ուսուցման դասընթացում ընդգրկվում են միայն զբաղվածության տարածքային կենտրոնների կողմից գործուղված անձինք համաձայն կատարողին ներկայացված ցուցակի, որը ներկայացվում է պայմանագիրը կնքելուց հետո հնգօրյա ժամկետում:

6. Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է Գյումրի քաղաքում:

7. Գործակալությունը պարտավորվում է.

7.1 դասընթացը սկսվելուց հետո (10 աշխատանքային օրվա ընթացքում) ուսուցումից հրաժարված կամ հեռացված անձի փոխարեն, այդ մասին տեղեկանալուց հետո հնարավորության դեպքում կատարողի մոտ գործուղել 1 կետով նախատեսված համանման անձ

7.2 մասնակցել ունկնդիրների ավարտական քննություններին:

8.Կատարողը պարտավորվում է.

8.1 Յուրաքանչյուր ուսումնական ամսվա վերջին աշխատանքային օրը համապատասխան տարածքային կենտրոն տրամադրել տեղեկատվություն մասնակցության օրերի մասին՝ մասնակցի տվյալ ուսումնական ամսվա ընթացքում ուսուցմանը մասնակցած օրերին համապատասխան

8.2 Ունկնդրի՝ ուսուցումը իր բնակության վայրի համայնքից դուրս այլ համայնքում (բացառությամբ Երևան քաղաքի վարչական շրջանների) կազմակերպելու դեպքում փոխհատուցել տրանսպորտային ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված չափերով:

8.3 պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել մասնագիտական ուսուցման ծրագիրը, ծրագրի իրականացման հասցեն, պատասխանատուների անունները, դասավանդողների տվյալները (անունը, ազգանունը, մասնագիտությունը, աշխատանքային փորձը), դասընթացների իրականացման ժամանակացույցը, 10 աշխատանքային օրվա ընթացքում սկսել դասընթացը,

8.4 ապահովել մասնագիտական ուսուցման կազմակերպման համար համապատասխան մասնագետի, ինչպես նաև անհրաժեշտ պայմանների առկայությունը և ուսումնական նյութերի տրամադրումը տեսական և գործնական պարապմունքների համար,

8.5 դասընթացները սկսվելուց հետո վարել հաճախելիության թերթիկ՝ ամենօրյա ներկայությունը փաստելով ունկնդիրների ստորագրությամբ և յուրաքանչյուր ամսվա համար տարածքային կենտրոն (Երևանը՝ գործակալություն) ներկայացնել հաճախելիության թերթիկների պատճենները,

8.6 մասնագիտական ուսուցումից անձի հրաժարվելու մասին անհապաղ տեղեկացնել գործակալություն,

8.7 դասընթացը սկսելու օրվանից երեք անգամ անհարգելի պատճառով չներկայացած անձին հեռացնել դասընթացից և այդ մասին անհապաղ տեղեկացնել գործակալություն,

8.8 ուսուցման ընթացքում դասընթացներից հրաժարված կամ հեռացված անձին մեկ ուրիշով չփոխարինելու դեպքում հետ փոխանցել ուսուցման ծախսը, հիմք ընդունելով մեկ ունկնդրի համար նախատեսված ուսուցման գումարի չափը և դասընթացներին փաստացի մասնակցած օրերի քանակը,

8.9 մասնագիտական ուսուցման ընթացքում կազմակերպել գործնական աշխատանքներ,

8.10 մասնագիտական ուսուցումն ավարտելուց հետո անցկացնել քննություն և տալ համապատասխան վկայական (կարգ, կատեգորիա):

8.11 Ուսուցումն ավարտած անձանց առնվազն 70%-ին 20 օրացույցային օրվա ընթացքում տեղավորել ստացած հմտություններին համապատասխան աշխատանքի նվազագույնը մեկ տարի ժամկետով և գործակալություն ներկայացնել աշխատանքի ընդունման մասին ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի պահանջներին համապատասխան անհատական իրավական ակտի և աշխատանքային գրքույկների՝ այդ մասին գրառումներ պարունակող էջերի պատճենները: Սահմանված տեղադրում աշխատանքի չտեղավորելու դեպքում չի վճարվի պայմանագրի գումարի 50%-ը, իսկ պայմանագրի գումարի վճարված լինելու դեպքում հետ կգանձվի պայմանագրի գնի 50%-ը:

8.12. Աշխատանքային պայմանագրի գործողության առաջին մեկ տարվա ընթացքում, աշխատած յուրաքանչյուր 3 ամսվա համար՝ 10 օրվա ընթացքում, Կատարողը գործակալության համապատասխան տարածքային մարմին է ներկայացնում տեղեկանք՝ ուսուցումն ավարտած և աշխատանքի տեղավորված անձանց աշխատելու փաստի վերաբերյալ:

8.13. Ուսուցումն իրականացնող կազմակերպությունում աշխատանքի տեղավորված անձի հետ 12 ամսից շուտ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում աշխատանքի ընդունել ուսուցումն ավարտած մեկ այլ անձի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ		ԿԱՏԱՐՈՂ	
Աշխատակազմի ղեկավար	Ա. Գրիգորյան	Գործադիր տնօրեն	Կ. Գումցյան

հավելված N 2
«17» «08» 2016թ-ին կնքված
N ՇՀԾՁԲ-15/11-16/7-90 գնման պայմանագրի

ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող՝ 10.05.01. "03. Մասնագիտական ուսուցման կազմակերպում" ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում գնման ենթակա ծառայությունների

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Գնման ենթակա ծառայությունների							
Չափաբաժնի համարը	Իրականացման տարածքը	Անվանումը	Ուսուցման տևողությունը*	Միավորի գինը	Չափման միավորը	Քանակ	Գումար
1	2	3	4	5	6	7	8
26	Գյումրի	26. "Փաթեթավորող (ձեռքով)" մասնագիտությամբ ուսուցում ք.Գյումրիում	2 ամիս	110000	գործազուրկ	90	9900000
					հաշմանդամ	10	1100000
	Ընդամենը					100	11000000

* Դասընթացները սկսվում են պայմանագիրը կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյան

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն Կ. Գոմցյան

հավելված N 3
«17» «08» 2016թ-ին կնքված
N ԵՀՔԶԲ-15/11-16/7-90 գնման պայմանագրի

ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող՝ 10.05.01. "03. Մասնագիտական ուսուցման կազմակերպում" ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում գնման ենթակա ծառայությունների

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

(ՀՀ դրամ)

Գնման ենթակա ծառայությունների					Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ-ին												
Չափաբաժնի համարը	Իրականացման տարածքը	Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգ. հոդվածը	Չափման միավորը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
					դրամ	դրամ	դրամ	դրամ	դրամ	դրամ	դրամ	դրամ	դրամ	դրամ	դրամ	դրամ	դրամ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
26	Գյումրի	26. "Փաթեթավորող (ձեռքով)" մասնագիտությամբ ուսուցում ք.Գյումրիում	4241	գործազուրկ										9900000	9900000	9900000	9900000
				հաշմանդամ										1100000	1100000	1100000	1100000
	Ընդամենը				0	0	0	0	0	0	0	0	0	11000000	11000000	11000000	11000000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն Կ. Գոմցյան

Կ.Տ.

Հավելված N 4
«17» «08» 2016թ. կնքված
N ՇՀՇՁԲ-15/11-16/7-90 ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը_____	գտնվելու վայրը_____
_____	_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն, ի դեմս _____ և Կատարողն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ Ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ վճարման ժամանակացույցի)
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ Ծառայությունների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
_____	_____
(ազգանուն, անուն)	(ազգանուն, անուն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
«17» «08» 2016թ. կնքված
N ՇՀԾՁԲ-15/11-16/7-90 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ---------- ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
---------- ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- --- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

(ստորագրություն)

(ազգանուն, անուն)

Կ.Տ.

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

(ստորագրություն)

(ազգանուն, անուն)

Կ.Տ.